ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ մեծանուն կոմպոզիտոր, ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, Սբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանակիր Ալեքսանդր Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դեմիրճյան փողոց-25 շենքին փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ալեքսանդր Գրիգորի Հարությունյանը ծնվել է 1920 թվականի սեպտեմբերի 23-ին:

1927 թվականի Ալ. Հարությունյանը դարձել է Երևանի պետական կոնսերվատորիայի մանկական խմբի անդամ, իսկ արդեն 14 տարեկան հասակում նա ուսանել է կոնսերվատորիայի ստուդիայում:

Ալ. Հարությունյանը 1941 թվականին ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական և դաշնամուրի բաժինները, 1946-1948թթ. կատարելագործվել է Մոսկվայի հայ մշակույթի տան ստուդիայում:

Հայ մեծանուն կոմպոզիտոր Ալ. Հարությունյանը 1954-1991թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավարը, 1970-2008թթ. դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում:

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ մրցանակի դափնեկիր, Սբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանակիր Ալեքսանդր Հարությունյանը մահացել է 2012 թվականի մարտի 28-ին:

Ալ. Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Դեմիրճյան-25 շենքին փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի կողմից:

Նկատի ունենալով վերոգրյալը և հաշվի առնելով Ալ. Հարությունյանի մեծագույն ավանդը հայ երաժշտարվեստի զարգացման բնագավառում, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Ալեքսանդր Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու իրավական ակտի նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼՔԵՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ